ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Քերթուածն Շաթոպրիանի, յորջորջեալ Մարտիրոսք կամ վկայք, մի է 'ի գեղեցկագոյն երկասիրութեանց նորա և 'ի հրաշակերտ մատենից գաղղիական դպրութեան։ Զի են 'ի նմա խիտ առ խիտ նկարագիրք վսեմք, և դրուագք մի քան զմի գեղեցիկք զանազանեալք և աննմանք, յորս առաւելապէս փայլէ հանճար քերթողին։ Առ 'ի ճաշակ իմն բանասիրաց զքերթուածոյս՝ դիցուք աստ զնկարագիր ճակատամարտի Փրանկաց ընդ Հռովմայեցիս, թարգմանեալ 'ի գաղղիական բնագրէն 'ի ձեռն Հոգոյեան Պ. Վիչէնի, աշակերտի Մուրատեան վարժարանին որ 'ի Փարիզ, 'ի չորրորդ ամի աշակերտութեան իւրոյ։

Ի գանգրաձև ծայրից ոսկեհուռ ամպոց վերծեալ արփին օրարեր՝ սփռէ զլոյս իւր ընդ մայրիս վաղ ընդ փոյթ ընդ Ովկիան և ընդ վաշտս ճակատուն։ Թուէր իմն բոցավառեալ երկիր 'ի հրացայտ սաղաւարտից և տիգաց. նուագարանք պատերազմի հնչէին զնախնին նուագ հարեալ երբեմն 'ի խաղալ Յուլիոսի կեսարու յաշխարհն կելտաց. զամենեցուն գրաւէ զսիրտս զայրոյթ, աչք արիւնռուշտք, և ձեռք 'ի սուսերս ըսպառնալիցք ընթանան։ Ընդվզի ձիանն, դափր հատանէ, տատանէ զբաշ, և փրփրերախ բերանով ծեծէ զլանջան բոլորաքեալս, կամ զբոցաշունչ ռնգունսն 'ի վեր ամբառնայ շնչել զգործեաց մարտամբոխ շառաչ։

Հռովմայեցիք առնուն զերգ Պրոբոսի. Եթէ հազարս, 'ի Փրանկաց արկցուք զիտապաստ, քանիօն բիւրուց չլինիցիմք յաղթականք Արեաց։

Հելլէնք կրկնեն պարակիցք զՊէան, և Կելտք զօրհնութիւն Դրուիդաց։ Փրանկք պատասխանեն մահագոյժ երգովն, և զասպարս զշրթամբք ածեալ՝ մռնչիւն իմն լսելի առնեն հանգոյն կոծելոց ալեաց զորս խորտակէ մրրիկ ընդ ժայռ։ Եւ ապա յանկարծ հարեալ ուժգին աղաղակ, հնչեցուցանեն նուագս 'ի գով դիւցազանցն իւրեանց։

«Փարամոնդ, Փարամոնդ, մարտեաք սուսերաւ։

«Արձակեցաք զվաղր երկսայրի, և քիրտն հոսեալ ընդ ճակատ գոռ զօրականին՝ ընդ բազուկն 'ի վայր առուիւ ընթանայր։ Արծուիք և թռչունք դեղնամագիլ խայտային 'ի ճիչ ցնծութեան. ագռաւ ընդ ճապաղիս արեան սպանելոցն լողայր. Ովկիան ներկանէր յարիւն, և կուսանք յերկարեցին 'ի լալօնս։

«Փարամոնդ, Փարամոնդ, մարտեաք սուսերաւ։

«Հարք մեր անկան 'ի մարտի. հեծեցին անգեղք 'ի վերայ նոցա. Հարք մեր յագեցուցանէին զնոսա 'ի նախճիրս թշնամեաց. ընտրեսցուք մեզ 'ի հարսունս, որոց փոխանակ կաթին իցէ արիւն՝ ընուլ արութեամբ զսիրտ որդւոց մերոց։

«Փարամոնդ, աւարտ երգոյս ժամանեալ, ժամք կենացս անցանեն, զուարթագին դիմեմք 'ի մահ»։

Այսպէս նուագէին բիւրք չորք բարբարոսաց, և հեծեալք նոցա ելևէջ ըստ երգոցն առնէին սպիտակափայլ ասպարացն իւրեանց. և 'ի ծայրայանգս կցուրդիցն նիզակ ընդ լանջս երկաթապատս չկահէին։

Մերձ հասեալ կային Փրանկք իբրև նետընկէց մի թեթևազէն վաշտուց մերոց, զտեղի առին բանակքն երկոքին. եղև լռութիւն խորին։ Հրամայէ Ինքնակալն 'ի միջոյ քրիստոսախումբ լեգէոնին 'ի վեր ամբառնալ զվերտն ծիրանափայլ 'ի նշան մարտին. լարեն աղեղնաւորք զաղեղունս իւրեանց, հետևակք խոնարհեն զնիզակս, և հեծեալք մերկանան միանգամայն զսուսերս, ցոլք 'ի նոցունց ընդ օդս փայլատակեն։ Աղաղակ 'ի խորոց անտի լեգէոնախումբ բանակին լինի լսելի՝ Յաղթութիւն կայսեր։ Բարբարոսք յետս ընդդէմ մղեն զաղաղակն ահագին գոչմամբ։ Ոչ այնքան սաստիկ 'ի գագաթունս Ապենինեաց, որոտընդոստ ճայթեն շանթիւք ոչ Ետնա

այնպէս զայրագին սպառնայ 'ի հոսել 'ի ծով զՀեղեղն բոցեղէնս, և ոչ Ով-կիան այնպէս ուժգին զափունս բաղխէ յիջանել աստուածասաստ ամպրոպաց բանալ զսահանս անդնդոց։ Կելտք նա-խաձեռն զաշտէս ընդդէմ Փրանկաց արձակեալ, սուսերամերկ 'ի Թշնամիս անդր յարձակին։ Անսասան արիու-թեամբ դիմագրաւեն նոցա Փրանկք. երիցս դառնան նոքա 'ի յարձակումն, և երիցս բաղխեալ յետս ընդդէմ մղին 'ի բազմաձեռն ճամբարէն։ Այսպէս նաև վիթխարի երերածուփ 'ի ներհակ հողմոց յետս երկուստեք վանէ զկոհակս ալեաց՝ որ խուսեն մռնչմամբ առ կո-ղիւք նորին։ Ոչինչ ընդհատ արիասիրտ Հելլէնք, և աջողագոյնք քան զկելտս, տեղատարափս նետից 'ի վերայ Սիկամ-բրաց թօթափեն։ Իսկ մեք առանց ըզ-ռաալմս մեր խրամատելոյ, տակաւ վեր-ջոտնեալ, ճգնէաք զերկոսին կողմանս եռանկեան Թշնամեաց. որպէս ցուլ 'ի բիւր մարմանդս յաղթական, 'ի ծայ-բաբեկ եղջերան և 'ի սպիս լայնատարր լանջացն սիգազանծ, ոչ ունի ժոյժ խայթուածոց բոռոց 'ի տապախառն միջօրէի, այսպէս և Փրանկք հարուա-ծեալք 'ի սլաքաց նետիցս մելոց՝ մոլեգ-նին ընդ վերան անփառունակս, զորոց չկարեն հանել զվրէժ. և առ զայրոյթ կաչացու խորտակեն զնետս 'ի լանջս իւրեանց, և յերկիր թաւալեալ գելուն առ կսկիծ ցաւոցն։

Հեծելազօրն հռովմէական խաղայ վանել զբարբարոսս. Կլոտիոն խոյանայ ընդդէմ նոցա։ Արքայն Թաւագէս հե-ծեալ էր 'ի մատակ ստերջ 'ի սեաւ կի-սովիր և 'ի սպիտակ, բուծեալ 'ի հօտս եղջերուաց և այծեմանց, յերամակս փարամոնդի։ . . . Մարտ սաստիկ յու-զէր հեծելոց 'ի կրկին թեւս բանակաց։

Յայնմ վայրի բարբարոսացն հրոսակ ահագին դայր և խուժէր 'ի վերայ լե-գէոնացն։ Փեռեկին լեգէոնք, փոխեն զռազմ ճակատուն, և 'ի հարուածս մե-ծամեծս նիզակաց հարկանեն զերկո-սին կողմանս եռանկեան Թշնամւոյն. մեկնակողէնք Կելտք և Հելլէնք դիմեն յերրորդ կողմն. կան Փրանկք շրջափա-կեալ որպէս ամուր մեծատարած։ Զայ-բանայ կռիւ մարտին, և մրրկեալ փոշի շառագոյն ամբառնայ կայ 'ի մէջ երկուց ճակատուց։ Գնան արեան ճապաղիք որպէս 'ի տարափից ձմերայնոյ հեղեղ սաստկացեալ, որպէս ալիք Եւրիպեան 'ի կիրճն Եւբիոյ. Փրանկն սեգ ընդ լայնա-բաց վէրս իւր, որ շքեղագոյն 'ի սպի-տակ կիսամերկ մարմնի երևէին, թուէր ուրու զերծ 'ի շիրմէ առիւծաբար 'ի մէջ դիականց մռնչելով։ Փայլման զինուց զհետ դայր փոշի տարերանդ և տխուր նախճիր։ Բեկտին սաղաւարտք, ցցունք 'ի հող խոնարհեալ, խորտակին վահանք, ծակոտին զրահք։ Շունչ հրաբորբոք տասանց բիւրուց զօրականաց, և թան-ձրախիտ երիվարացն փռնչիւն, գոլորշի քրտանց և արեան, գործէին 'ի մար-տին տեղւոջ երևոյթ իմն օդեղէն՝ հեր-ձեալ երբէք երբէք 'ի փայլիւն սուսե-բաց, որպէս աղօտ մրրիկ 'ի շողիւն փայ-լական։ Ի խառնաձայն աղաղակի անդ Թշնամանաց և սպառնալեաց, 'ի շկա-հիւն սայրասուր սուսերաց և աշտէից, 'ի սոյլ նետից և սլաքաց, և 'ի ճռնչիւն մարտացու մեքենայից ոչ ևս լսէին ձայնք զօրավարաց։

Մերովեայ նախճիր մեծ 'ի Հռովմայե-ցիս գործեալ, կանգուն կայր 'ի սոյլ ա-հագին երկոտասան զինակցաց, որ կոչէին ղոյգոստատք նորին, և ինքն ուսով չափ 'ի վեր էր քան զնոսա։ Ի ծագ կառացն ծածանէր ընդ օդս դրօշ պատերազմիկ անուանեալ ոսկեվառ։ Սայլն ակաղձեալ 'ի կողոպուտ ամբառ ձգէր յերից ցլուց, որոց ծունկք արիւնաթաթաւք, և եղջերք բերէին յօշուածս դիականց 'ի սոսկումն աչաց։ Ժառանգաւոր սուսերին փարա-մոնդի հասակակից էր և զուգագեղեցիկ և կատաղութեամբն իսկ հանգէտ դի-ւին Թրակիոյ, որ 'ի բոց քաղաքաց հրկիզելոց լուցանէ զհուր բաղնացն իւ-րոց։ . . . Մերովէ յագեալ կոտորածիւ, կայր արձանացեալ, հայէր 'ի բարձուէ յաղթական կառացն իւրոց՝ 'ի դիակունս՝ որովք ծածկեալ էր զդաշտավայրն առ հասարակ։ Այսպէս դադարէ առիւծ

նումիդեան գիշադէշ պատառեալ զհօտ խաշին . քաղց իւր կշտապինդ, և լանջք իւր ծխեն զհոտ կոտորածին . բանայ և փակէ զժանիս իւր խոնջս շաղեալ 'ի ծուէնս գեղման : Ընկողմանի նա 'ի մէջ գառանցն խողխողելոց . բաշք նորա տամուկք 'ի ցօղոյ արեան անկանին երկուստեք զպարանոցաւ նորա . զթաթուլս իւր հուժկուս զմիմեամբք ածեալ, զգլուխ իւր 'ի վերայ ճիրանացն հանգուցեալ, աչք իւր թերաբացք, լիզու տակաւին զգեղմն փափուկ տարածեալ զիւրև :

Զօրավարն կելտաց տեսեալ զՄերովէ գոռոզ և թշնամանալից զկայ առեալ, վառի 'ի զայրոյթ, հուպ մատչի փարամոնդեան զաւակին, ձայն տայ հեգնելով.

— Գիտակագեղդ զօրագլուխ, այլազգ բազմեցուցիչ ես զքեզ 'ի գահ կելտեանն Հերակլի, արժանաւոր ես արի պատանիդ տանելոյ զնշանակ սուսերիս յապարանս անդր Տեւտատեայ. չեն ինձ կամք թողուլ քեզ տառապիլ 'ի վատ ծերութեան :

— Պատասխանի ետ Մերովէ 'ի ժպիտ երգիծական. Եւ ո՞ լիցես դու. 'ի հոյակա՞պ 'ի վաղեմի՞ ազգատոհմէ : Սորուկդ Հռովմայեցի, չերկնչի՞ս 'ի վաղակաւորէ աստի իմմէ :

Իսկ կելտն մռնչելով առ կատաղութեան ասէ . Ոչ յայլմէ իմեքէ երկիւղ է ինձ, բայց յանկանելոյ երկնից 'ի գլուխ իմ :

— Եւ Սիկամբրացին գոչէ խրոխտանօք . Թող ինձ զերկիրդ :

— Կելտն պատասխանէ . Զերկիր զոր քեզ տաց՝ կալցիս յաւիտեան : Յայնժամ Մերովէ յեց 'ի վաղակաւորն իւր՝ վազէ 'ի կառաց զցլովքն, և հանդէպ՝ ճակատուց նոցա 'ի վայր ոստուցեալ յանդիման լինի կելտին, որ դիմեալ գայր առ նա : Բանակն համօրէն դադարէ 'ի տեսիլ մենամարտի երկոցունց պետացն : Կելտն սուսերամերկ խոյանայ 'ի փրանկ պատանին, 'ի նեղ զնա արկանէ, վիրաւորէ զնա 'ի յուս, և ընկրկէ զոտսն մինչև ցեղջերս ցլուցն : Իսկ Մերովէ ձգէ զգեղարդն, որ երկոքումբք կոր ճանկօքն մխեալ մնայ յասպար կելտացւոյն : Անդէն զաւակն կլոտիոնեան ոստնու առիւծաբար, դնէ զոտն 'ի վերայ գեղարդանն, մղէ 'ի վայր ուժգնակի, և զոյգ ընդ նմին յերկիր խոնարհեցուցանէ զասպար ոսոխին : Կելտն վատչուէր անպատսպար ցուցանէ զգլուխ իւր. և ահա սակր փրանկին չկահեալ խոյանայ մխի 'ի ճակատ նորա որպէս տապար մայրեորի 'ի գագաթն շոճւոյ : Հերձու կառափն մարտկին, ցայտեն խելք նորա երկուստեք. աչք նորա թաւալին յերկիր, և մարմին նորա կայ մնայ առ վայր մի արձանացեալ, զբազուկսն 'ի ցնցմանէ ջլացն ձգտեալ. տեսիլ սոսկալի և աղիողորմ :

Կական առ ցաւոց բարձին կելտք ընդ այն, զի վերջին 'ի սերնդոց Վերկինգետորիքսի էր զօրավարն, որ ընդ այնքան ժամանակս խափան եկաց յաղթութեանն կեսարու : Թուէր իմն մահուամբ նորա անցանել 'ի փրանկս կելտացն պետութեան խուսափելոյ 'ի Հռովմայեցւոց : Յայնժամ խնդալիցք պար առնուն զՄերովեաւ փրանկք, և բարձեալ զնա 'ի վահանի թագաւոր իւրեանց կարդան զնա հանդերձ հարբք նորա, զի քաջագոյն 'ի Սիկամբրացիս էր նա : Ահ և երկիւղ պատեն զլեգէոնս. կոստանդ՝ որ 'ի միջավայրի օժանդակ գնդին կացեալ դիտէր զշարժմունս բանակին, տեսանէ զվհատութիւն իւրոցն, դառնայ առ լեգէոնն քրիստոնէից և ասէ՝ «Մարտիկք առաքինիք, բաղդն Հռովմայ 'ի ձեռս ձեր է, խաղացուք 'ի թշնամին » :

Անդէն հաւատացեալք խոնարհեցուցանեն առաջի կեսարու զարծուիս իւրեանց, որոց հովանի էր նշան խաչին, և վիկտոր զօրավարէր նոցին : Շարժի լեգէոնն, իջանէ լռին 'ի բլրոյ անտի : Յասպար իւրաքանչիւր զինուորի դրուագեալ կայր նշանն սուրբ, և շուրջ զնովաւ՝ Այսու յաղթեսցես : Հարիւրապետք առհասարակ էին վկայք լի ազեօք հրոյ և սրոյ. և զի՞նչ զօրէր արանց այսպիսեաց երկիւղ վիրաց և մահու . ո՛վ

հաւատարմութիւն խանդաղատելի. դիմէին հեղուլ վասն տեարց Իւրեանց զմնացուածս արեան՝ զորոյ գոգցես ցամաքեցուցեալ էր նոցա զաղբերակն։ Ոչ երկիւղ ինչ, այլ և ոչ խնդութիւն 'ի դէմս քաջազանցն քրիստոնէից եբուէր. արութիւն նոցա անվրդով զամբիծ շուշանաց բերէր զնմանութիւն։ Ի խաղալ լեգէոնին 'ի դաշտավայրն զկայառին Փրանկք յընթացս յաղթանակին Իւրեանց։ Ասէին երևեալ յառաջոյ լեգէոնին սիւն ինն հրեղէն ամպոյ և հեծեալ սպիտակահանդերձ վառեալ 'ի տէգ և յասպար ոսկի։ Դառնան յետս Հռովմայեցիք փախստեայք, ծագէ նշոյլ յուսոյ 'ի սիրտ տկարագունին և սրտաբեկելոյ. որպէս յետ մրրկալից գիշերոյ 'ի ծագել արեգական ընդ առաւօտն՝ հրաշանայ մշակն յապահովեալ 'ի տեսիլ աստեղն, որ գեղայօրէն լուսազարդէ զհամագոյս։ Ընդ բաղեղամբ հնոյ տաղաւարին ճճուէ ճնճղուկ զուարթադին, և 'ի վերայ սեմոց դրանն բազմի ծերունին. լսէ զքաղցրաձայն դայլալիկս նորա 'ի վերուստ, և օրհնէ զարարիչն։

Ի մերձենալ քրիստոսական գնդին, սեղմեն բարբարոսք զռազմն Իւրեանց. և գումարի կաց մնաց հռովմէական զօրուն։ Հասեալ 'ի տեղի ճակատուն զկայառնու լեգէոնն, ծունր դնէ 'ի գետին, ընդունի 'ի ձեռաց քահանայի զօրհնութիւն ցեառն զօրութեանց. և Կոստանդ ինքնին խոնարհի, 'ի բաց առեալ 'ի գլխոյ իւրմէ զպսակն սարդենի։ Յառնէ գունդն սուրբ. և առանց նետաձիգ լինելոյ՝ խաղայ սուսերամերկ 'ի թշնամիս։ Սկիզբն լինի մարտին ամենայն ուրեք. խրամատէ քրիստոսականն լեգէոն խրամատ մեծ 'ի ճակատ բարբարոսաց. Հռովմայեցիք, Յոյնք և Կելտք մոռանեալք միանգամայն զհետ Վիկտորի 'ի պատնէշ Փրանկացն պարտելոյ։ Զյետ յարձակման մարդիկ զօրաց՝ յաջորդէ մարտ զօրէն դիւցազանցն Իլիոնի. գունդք ընդ գունդս բաղխին յոգնախումբ մարտկաց, խուճապեն, վանեն զիրեարս. աղէտք ամենայն ուրեք յուսահատութիւն և փախուստ։ Օրիորդք Փրանկք, 'ի զուր կաղմէք դուք սպեղանի վիրաց անբժշկելեաց. ոմն կարեվէր 'ի սիրտ 'ի տէգ գեղարդեան, և խոյս 'ի սրտէ նորա տան սուրբ և սիրելի պատկերք հայրենեաց. այլ ոք ջաղջախեալ 'ի հարուած լախտի երկոքումբք բազկաք, ոչ ևս կարասցէ զդիեցիկն 'ի գիրկս հարսին գգուել զիւր մանկիկ։ Ոմն զաղարանս իւր և այլ ոք ողբայ զիւրն տաղաւար. նա զհրճուանս իւր և սա զվիշտս. զի և վիշտք և վայեքք սիրելի մարդոյ զկեանս գործեն։ Աստ զօրական հեթանոս, պարառեալ 'ի զինուորակցաց, նեղվելով զկեսար և զդիս, փչէ զոգին. այլուր զինուոր քրիստոնեայ մեռանի անոք, միով ձեռամբ զաղիսն 'ի գոգ իւր ժողովեալ և միւսովն զխաչ ողջագուրեալ, աղօթելով վասն կայսեր առ Աստուած։ Սիկամբրացիք առհասարակ 'ի հանդիպոյ վիրաւորք և յորսայս անկեալ, և 'ի մահուն իսկ էին ահագնատեսիլք, մինչև արիագունից ևս չիշխել հայել 'ի նոսա։

Եւ ելբ մռացայց զձեղ ամբք վեհազինք, փրանկ պատանիք, որոց հանդիպեցայ 'ի տեղւոջ անգկոտորածի մարտին։ Բարեկամք հաւատարիմք, կաթոգինք քան խոհեմք, առ 'ի կրել զնոյն 'ի մարտի անդ ճակատագիր, շղթայակիցք ընդ միմեանս էին կապեալ կամակար։ Ի կրետացւոյ ումեմնէ մին յերկոցունց անկեալ նետահար, իսկ միւսն 'ի մահ վիրաւոր՝ այլ տակաւին կենդանի, կիսայար առ դիակամբ զինուորակցին՝ ասէ ցնա. Նահատակդ ննջէս դու յետ վաստակոց ճակատամարտին. ոչ ևս բանայցես զաչս քո 'ի լուր ձայնիս. այլ կապանք մերոյ մոերմութեան անլոյծք են և ունին զիս առ քեզ։ Զայս ասացեալ պատանին փրանկ անկանի 'ի վերայ դիական սիրելւոյն մեռեալ։ Վարդք նոցա գեղանիք խառնին յիրեարս իբրև զբոցս ծածանեալս կրկին եռոտանեաց շիջելոց 'ի բագնի, իբրև զտամուկ և ըզդողդոջ ճառագայթս երկուորեակ աստեղաց խոնարհելոց յալիս Ովկիանու։ Յաւել մահ զշղթայս իւր անխզելիս 'ի կապանան, որ զոդէին 'ի մի զսիրելիսն զերկոսին։

Յայնմ վայրի վաստակաբեկ բազկաց սկարանային հարուածք, և աղմուկ աղաղակին հնչէր աղիողորմ և ողբագին. մերթ վիրաւորաց բազմաց 'ի միասին փչելով զոգիս՝ տիրէր լռութիւն զարհուրելի, և մերթ դարձեալ սաստկանայր ճիչ ցաւոց, և 'ի յերկարաձիգ հեծութիւնս յերկինս ամբառնայր: Անդ էր տեսանել երիվարս առանց հեծելոց՝ որք ընդոստ կամ թաւալգլոր գնային զգխակամբք. և մենքենայք պատերազմիկք աստ անդ լքեալք բորբոքէին որպէս ջահք ամբաւից մեռելոցն յուղարկաւորութեան:

Եհաս գիշեր ծածկել խաւարաւ զտեսարան մարդկեղէն մոլեգնութեան: Փռանկք և 'ի պարտութեան անդ ահարկուք՝ մեկնէին 'ի պատնէշս սայլից իւրեանց: Գիշերն այնքան կարեւոր մեզ առ 'ի հանգիստ, եղև մեզ գիշեր արհաւրաց. ցանգ յերկիւղի էաք 'ի թշնամեացն յարձակմանէ: Աղաղակ բարբարոսաց բերէր զնմանութիւն գոչելոյ ամեհի գազանաց. ողբային նոքա զնահատակսն կորուսեալս, և ինքեանք ևս 'ի մահ պատրաստէին. ոչ իշխէաք թողուլ զզէնս մեր, և ոչ լուցանել խարոյկ: Մռնչէին զօրականք Հռովմայեցիք, և 'ի խնդիր միմեանց շրջէին 'ի խաւարի. կոչէին յանուանէ զիրեարս, հայցէին 'ի միմեանց փոքր մի հաց, սակաւիկ մի ջուր. պատռէին զհանդերձս իւրեանց առ 'ի պատել զվէրս մարմնոյն. և գիշերապահք ձայն տային միմեանց ազդել արթնութիւն:

Զօրապետք կրետացւոց առհասարակ անկեալ էին 'ի ճակատուն. արիւն փիլոպեմենեայ բարեգուշակ թուէր զինուորակցաց իմոց. զօրավար իւրեանց կարդային զիս. և իմ զճիգն թշնամեաց յանձն ձգեալ, յաջողեցաւ ինձ փրկել զլեգէոնն երկաթի 'ի սպառասպուռ խորտակմանէ: Յաջողակի ելից յաղթութեանն մրցանակ՝ շնորհեցաւ ինձ հաստատութիւն աստիճանիս, և պսակ կաղնեայ և զրուատիք կոստանդեայ: Ի գլուխ կացեալ թեթևազէն վաշտից, մտեալ 'ի ճամբար անդր բարբարոսաց, և միայն անժոյժ այգուն լինելոյ. բայց այգն այն եբաց մեզ տեսարան առաւել զարհուրելի քան զորս տեսեալ էր մեր ցայն վայր: Զի Փռանկաց հատեալ էր գիշերայն զգլուխս դիականց Հռովմայեցւոց, և կանգնեալ ընտաս 'ի տէգ նիզակաց յանդիման բանակին իւրեանց, առ մեզ զդէմն ունելով. և խարոյկ բոցածաւալ 'ի թամբից երիվարաց և յասպարաց խորտակելոց բարձրանայր 'ի միջավայրի բանակին: Ծերունին Փարամոնդ յայսկոյս և յայն զաչս սպառնալիցս յածեցուցեալ, և զալիս իւր տուեալ հողմոց, բազմեալ կայր 'ի ծագ խարուկին. առ ստորոտովն կային Կլոտին և Մերովէ, փոխանակ ջահից տիգաբունս երկուս խանձողեալս զնիզակաց խորտակելոց 'ի ձեռին ունելով, առ 'ի հուր հարկանել 'ի գահոյս դամբանականս հօր իւրեանց 'ի խրամատել Հռովմայեցւոց զպատնէշ սայլիցն:

Կարկեալ կայաք առ ապշութեան և առ վշտի. յաղթականք թուէին պարտեալք առ այնքան խժդժութեան և մեծանձնութեան: Արտասուք յաչաց մերոց հոսէին 'ի տեսիլ արիւնաթաթաւ կառափանց զինուորակցացն մերոց. մէն մի 'ի մէնջ ընդ միտ ածէր՝ զի բերանքն այնուքիկ համբուրեալ և տժգունեալ զմտերմութեան բանս յերէկն բարբառէին: Կրիցս այսոցիկ վշտալեաց հուպ ընդ հուպ յաջորդէ ծարաւ վրէժխնդրութեան. ոչ ևս միայն տալոյ նշանին յարձակման. ոչ ինչ կարէ սանձահարել զմոլեգնութիւն զօրականին. խորտակեն զսայլսն, պատառեն զբանակն, և 'ի ներքս խուժեն: Յայնժամ ընդառաջ լինի մեզ այլ թշնամի. կանայք բարբարոսաց սևազգեստք դիմեն առ մեզ, և խոցոտեն 'ի զինուց մերոց՝ 'ի ճգնելն կորզել զայնս 'ի ձեռաց մերոց: Կէսք 'ի նոցանէ դարձուցանեն յետս զՍիկամբրացիքս փախստեայս, բուռն հարեալ զմօրուացն, խրախուսելով զնա վերստին 'ի մարտ. այլք երբեմն զաստուածապարարկացն ջոկս գինէհարեալք գիշագէշ պատառեն զարս

իւրեանց և զհարս: Բազումք դարձեալ խեղդամահ արարեալ զորդիս իւրեանց արկանէին զնոսա առաթուր արանց և երիվարաց. և այլք խեղդ մահու արկեալ 'ի պարանոց՝ կապէին յեղջերս եզանց, և 'ի քարշ արկեալ 'ի նոցանէ սաստկամահ կորնչէին: Իսկ ոմն 'ի նոցանէ, գոչէր 'ի միջոյ իւրոցն.

«Ո՜ Հռովմայեցիք, ոչ ամենայն պարգևքդ ձեր եղեն մեզ աղետաբերք. յածել մեզ զչղթայս գերութեան, ետուք մեզ և երկաթ ազատութեան: Եւ զայս ասացեալ չոգաւ զսրովն զիւրովին:

Հասեալ իսկ էր վախճան ազգին փարամնդի, եթէ երկինք ոչ զերծուցանէին զմնացորդս մարտկաց նորա, մեծամեծս թերևս պատրաստեալ նմա առ յապայս: Այլ ահա հողմն ուժգին շնչեալ ընդ հիւսիս և ընդ արևմուտս. դիմեն կոհակք յաւազուտս. եռան անդունդք 'ի փրփրադէզ և 'ի պղտոր ալիս մրրկացն զուգորէից՝ որ 'ի նահանգս անդ թուին իմն մղել զՈվկիան համատարած անդր քան զաւազածիր սահմանս իւր: Որպէս հզօր նիզակակից բարբարոսաց մօտանէ ծով 'ի բանակ փրանկաց վանել անտի զՀռովմայեցիս: Ընկրկին նոքա յերեսաց զօրութեան ալեաց. փրանկք քաջալերին, և թուի իմն նոցա նհանգն ծովային, հայր իշխանին իւրեանց պատանւոյ՝ ելեալ 'ի կապուտակ քարանձաւէն՝ հասանել նոցա 'ի թիկունս: Նոքա յօգուտ 'ի կիր արկեալ զմեր չտապ տագնապի՝ ընկրկեն վանեն զմեզ օգնելով ալեաց: Տեսարան իմն անօրինակ յապուշ կրթէր զաչս ամենեցուն. զի եզինք զարհուրեալք գնային 'ի լուղ զհետ ձգելով զայլս. եղջիւրք ևեթ նոցա կամակորք յերեսս կոհակաց 'ի վեր երևէին՝ բերելով զնմանութիւն բազմութեան վտակաց՝ հարկատուաց Ովկիանու: Ընդ Սալիացիք իջուցեալ 'ի ջուր զնաւս իւրեանց կաշեայս, հարկանէին զմեզ 'ի հարուածս թիոց և խառնելեաց: Մերովեայ զասպար ողորահիւս լայնատարր 'ի լաստ յօրինեալ, և ելեալ 'ի կոնքն պատերազմիկ՝ պնդէր զհետ մեր հանդերձ ընկերօքն որք իբրև զՏրիտոնս կայտռէին զնովաւ: Կանայք խօթամիտ խնդութեամբ զուարճացեալք, ծափ զծափի հարկանէին, օրհնելով զալիսն ազատարարս: Ամենայն ուստեք կոծեն ալիք զայրացեալք և ցայտեն ընդդէմ զինուց, ամենայն ուրեք անդնդասույզ ընկլուզանին հեծեալք և հետևակք՝ սուսերաց ևեթ նոցա 'ի մկանունս ջուրց 'ի վեր երևեալ. և դիակունք, գոգցես իմն կենդանացեալք, թաւալին ընդ սէզ ընդ աւազ և ընդ սիկ:

Մեծ թնդանօթ մը.

Միացեալ նահանգաց հոկտեմբեր ամսոյն լրագրին մէջ կը կարդանք որ 'ի Ֆօրդ–Համիլդըն, Ռոտման անունով թնդանօթին հանդէսը կատարուեր է և կատարելապէս յաջողեր է: Բերնին բացուածքը քսան մատնաչափ. 50 լիտր վառօդով լի, և ռումբ մը 1000 լիտր, կէս ժամ միայն առեր է զայն լեցունելը: Ուղղութիւնը դէպ 'ի գետին ըլլալով ռումբը քառորդ մղոն հեռու ջուրը ընկեր է, շատ անգամ որոտմունքներ տալով: Փորձը երկրորդելով՝ առջինին կրկինը լեցուցեր են, ռումբը 1080 լիտր, որուն նման ինչուան հիմա չէ եղած. բաւական դիւրին միջոցներ չունենալով՝ ստիպուեր են շատ աշխատութեամբ պատրաստել, և թնդանօթին ուղղութիւնը 25° գետնէն բարձր բռնել, որ կրակ առած ահաւոր թնդիւն մը հանելով, գնտակը երեք ու կէս մղոն հեռու ձգեր է:

Ահաւասիկ աս է Ռոտման թնդանօթին չափը. ծանրութիւնը առանց սայլի 116497 լիտր. երկայնութիւնը 24 ոտք. բացուածքը 20 մատնաչափ, և սովորական վառօդին կշիռը 100 լիտր. ռումբին միջին ծանրութիւնը 1000 լիտր: